ՎԱՅՐԻ ԾԱՂԻԿ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Գեղեցի՛կ, հոտաւէ՛տ դու ծաղիկ լեռնային,
Ո՞ւմ համար դու բուսար, ո՞ւմ համար ծաղկեցիր.
Ցըրտերում մեծացար անխընամ, առանձին
Եւ մի օր չը տեսար, ինչպէս որբ վըշտակիր։

Կուսական քընքըշիկ ձեռքերով չը քաղուած՝
Կուսական դու կըրծքի զարդարանք չը դառար.
Անմատոյց այդ լերան կատարին կըռացած՝
Անօգո՛ւտ աճեցիր, անօգո՛ւտ դու բուսար։

Վաղորդեան միայն մէգ, մառախուղ պատեցին
Այդ մատաղ, աննըման, գեղեցիկ քո պատկեր.
Միայն հողմ ու մըրրիկ քո չորս կողմ սուլեցին,
Եւ գըլխիդ ճայթեցին զայրացկոտ որոտներ...

Ինչպէս խեղճ և լըքեալ, քօղարկուած մըշուշով
Կարճեցիր դու քո կեանք անտերունչ, տըխրագին,
Նոյնպէս խեղճ և լըքեալ կը խամրիս դու շուտով,
Գեղեցի՛կ, հոտաւէ՛տ դու ծաղիկ լեռնային։

Մոսկուա, 1889 թ., 25 օգոստոսի։